մի բան. նա հասկացաւ իր արարքի վնասակարութիւնը եւ ամէն կերպ աշխատում էր իր հօտը մօտեցնել հայոց եկեղեցուն, որից այնպէս դաժան ու կոպիտ կերպով պոկել էր:

Փիլիպպոս կաթուղիկոսը մի ելք գտաւ Թորոսովիչի կաթոլիկութիւն ընդունելու հեռեւանքով ստեղծուած կացութիւնից. նա իրաւունք տուեց Թորոսովիչին անձնապէս, պատարագի ժամանակ, կաթուղիկոսի անունից առաջ յիշել պապի անունը, բայց Էջմիածնի աթոռին վերապահեց յետագային Լվովի արքեպիսկոպոս նշանակելու իրաւունքը:

Թորոսովիչը վերադարձաւ Լվով բոլորովին հաշտուած թէ՛ հայոց կաթուղիկոսի եւ թէ՛ իր հօտի հետ:

Այժմ նրա հանդէպ կարուկ կերպով փոխուեց լատին եկեղեցու ներկայացուցիչների վերաբերումը: Առաջ խօսք չէին գտնում գովելու համար, այժմ արատ ու թերութիւն չկար, որ չվերագրէին նրան: Մատնանշում էին նրա բարքերի անկման վրայ, որ վաղուց էր յայտնի եւ միայն այժմ էր հաշուի առնում: Ասում էին, որ Թորոսովիչը վատնել է եկեղեցիների գոյքերը, որոնք իրեն էին յանձնուած հէնց կաթոլիկ հոգեւորականութեան եւ աշխարհիկ իշխանութեան կարգադրութեամբ ու օգնութեամբ, եւայլն: Վերջապէս, համաձայնուեցին հանդիսաւ թողնել նրան, եթէ նա Հռոմից բերել տայ մի առաքելութիւն, դլխաւորութեամբ հայ եկեղեցական հարցերի մասնագէտ Հ. Կղեմէս Գալանին, որպէսզի սա իր ձեռքն առնէ Լեհաստանի հայերի հոգեւոր գործերի ղեկավարութիւնը եւ կազմակերպէ հոգեւոր վարժարան երիտասարդ հայերից քահանայական պաշտօնեաներ պատրաստելու նպատակով:

Թորոսովիչը կամայ ակամայ ընդունեց այս առաջարկութիւնը, եւ 1664 թ. Մայիս 1-ին Լվով հասան թէաթին հայրերը Կ. Գալանի դլխաւորութեամբ: Ցաջորդ տարի նրանք բացին ծրագրուած հոգեւոր վարժարանը, ուր դաստիարակեցին մի շարք կղերականներ, որոնց մէջ եւ Կեսարացի Վարդան Ցունանեանը, որը յետոյ դարձաւ Թորոսովիչի աթոռակիցը, իսկ նրա մահից յետոյ, նաեւ Լվովի արքեպիսկոպոսը:

Մինչեւ 1708 թ. այս դպրոցը ծառայում էր միայն հայ ունիտորների կարիքներին, իսկ այդ տարուանից նրա մէջ սկսուեցին ընդունուել եւ ռուսին ունիտորներ, եւ վարժարանը կորցրեց իր հայկական բնոյթը:

Եկած թէաթինները հետզհետէ իրենց ձեռքը առին հայոց եկեղեցու միութեան գործը հռոմէական եկեղեցու հետ:

Այժմ Թորոսովիչը թշնամաբար էր վերաբերում դէպի այդ գործը եւ բոլոր ընդհարումների մէջ պաշտպանում էր իր հօտը: Այն ժամանակ թէաթինները՝ համախորհուրդ Լեհաստանի պապական նունցիակի հետ՝ վճռեցին հեռացնել նրան Լվովից, որպէսզի իրենց ձեռքերն ազատ լինին, եւ 1667 թ. Թորոսովիչ մեկնեց Հռոմ, ուր նրան աւելի քան 7 տարի, մինչեւ 1674 թ. Դեկտեմբեր ամիսը պահեցին պատուաւոր գերութեան մէջ: Եւ նոյն հայ համայնքը, որ առաջ անհաշիւ գանգատներ էր տալիս եւ պահանջում նրա պաշտօնանկութիւնը, հիմա յամառ կերպով պնդում էր, որ վերադարձնեն Լվով:

Սակայն, նրանց ճիգերը արդիւնք չէին տալիս: Հռոմի աթոռը թէաթիններին տուեց բացարձակ հնարաւորութիւն՝ աւարտելու եկեղեցիների միութեան գործը, առանց որ Թորոսովիչը կարողանայ խանգարել:

Վերջապէս, զիջելով լեհահայ գաղութի թախանձագին խնդրանքներին՝ պապը համաձայնուեց ազատ թողնել Թորոսովիչին, բայց մեկնելուց առաջ ստիպեց նրան իրեն համար աթոռակից նշանակել, cum iure seccendi՝ իր մահուանից յետոյ յաջորդելու իրաւունքով, Վարդան Ցունանեանին:

1674 թ. Դեկտեմբերին, Թորոսովիչը Ցունանեանի հետ միասին մեծ պատիւներով ճանապարհ դրուեց դէպի Լվով: Բայց այստեղ դարձեալ չարդարացրեց պապի ակնկալութիւնները: Պաշտպանելով հայերին՝ նա արդելք էր հանդիսանում թէաթինների եւ Ցունանեանի ջանքերին՝ արագացնելու միութիւնը:

Ցունանեանը, տեսնելով, որ իր ներկայութիւնը Լվովում բոլորովին անպատակ է, մեկնեց Հայաստան միսիոնարական աշխատանքների համար: